ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԱՅԳԵՎԱՆԻ

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

АРМАВИРСКИЙ МАРЗ

МУНИЦИПАЛИТЕТ

С. АЙГЕВАН

N 112

«08» 12 2011թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Կից ուղարկվում են Այգեվան համայնքի ավագանու՝ 05.12.2011թ. կայացած թիվ 10 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր 8 էջ:

ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԵՂԻԶՅԱՆ

08 12 11764-11 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՈՐՈՇՈՒՄ

5 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2011թ.

1.ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Այգեվան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեվան գյուղական համայնքի ավագանու 2011թ. դեկտեմբերի 5-ի թիվ 10 արտահերթ նիստի օրակարգը :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

ԿՈՂՄ

1. Աղախանյան Կարեն ----------
2. Քեսաբյան Հակոբ ----------
3 Քեսաբյան Ալեքսանդր ----------
4. Սմբատյան Սանասար ----------
5.Քարամյան Ավետիք ----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԷՔԻԶՅԱՆ

2011 թվականի դեկտեմբերի 5
գ. Այգեվան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Այգեվան գյուղական
համայնքի Ավագանու 2011թ. դեկտեմբերի 5-ի
թիվ 510 արտահերթ նիստի

ՕՐԱԿԱՐԳ

Թիվ-10 արտահերթ նիստ 05.12.2011թ. ժամը՝ 12^{00}

1. ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ս. Էքիզյան/

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ս. Էքիզյան/

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ _ԴԵԿՏԵՄԲԵՐԻ-16 Ի N 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ս. Էքիզյան/

4. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԽԱՉԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՁԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ս. Էքիզյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՈՐՈՇՈՒՄ

5 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2011թ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով Այգեվան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի մարզի Այգեվան գյուղական համայնքի տարածքում 2011թ-ի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվա նախորդող 10-րդ օրը:

Ավագանու անդամներ՝

ԿՈՂՄ

1. Աղախանյան Կարեն ------------
2. Քեսաբլյան Հակոբ ------------
3 Քեսաբլյան Ալեքսանդր ------------
4. Սմբատյան Սանասար ------------
5.Քարամյան Ավետիք ------------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ...ԵՐԶՅԱՆ

2011 թվականի դեկտեմբերի 5

գ. Այգեվան

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի [illegible] ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական)շինարարության (տեղադրման) թույլատվության համար տեղական տուրքերը սահմանել՝ հիմնական օբյեկտների համար՝

1)մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառոցային) տների, ինչպես նաև 200 քառակուս մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար հինգ հազար դրամ:

2)սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ.

բ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

գ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար երեսուն հազար դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3)մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հազար հինգ հարյուր դրամ

4)20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքաների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1)չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ հազար դրամ. ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ հազար դրամ.

2)բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3)նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարաշքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքերը սահմանել երկու հազար դրամ:
4.համայնքի տարածքում տեղական տուրքեր սահմանել՝
1)ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ երեք հազար դրամ:
2)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ երեք հազար դրամ:
5.Համայնքի տարածքում՝
1)բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ.
2)հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել մեկ հարյուր հիսուն հազար դրամ:
6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ:
7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝
1)առևտրի օբյեկտների համար քսանհինգ հազար դրամ
2)հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ.
3)բաղնիքների (սաուննաների) համար երկու հարյուր հազար դրամ.
4)խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ.
5)շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.
8.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝
1)ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.
2)թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.
3)այլ արտաքին գովազդի համար հինգ հարյուր դրամ.
4)դատարկ գովազդային վահանակների համար յոթ հարյուր դրամ:
9.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենների և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել մեկ հազար դարմ:
10.Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հինգ հազար դրամ:
11.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար հինգ հազար դրամ:
12.Գյուղապետարանի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերձնելու և վարձակալության տրամադրելու անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար մեկ հազար դրամ:
13.Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցների վճարը հինգ հազար դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՈՐՈՇՈՒՄ

«_5___» դեկտեմբերի 2011թ. Թիվ3-Ն

3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ _ԴԵԿՏԵՄԲԵՐԻ-16 Ի N 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, երրորդ մասով, 56-րդ հոդվածի երկրորդ մասով .

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի -Այգեվանի գյուղական համայնքի 2010 թվականի դեկտեմբերի 16ի N 3-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1.Փոխադրամիջոցի գույքահարկը պակասեցնել 300,0 հազար դրամով
2.Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձնման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող այլ վճարները պակասեցնել 300,0հազար դրամով:

3.Տարեսկզբին վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե նախատեսված 2400,0հազար գումարից `580,0 հազար դրամ տեղափոխել վարչական բյուջեի պահուստային ֆոնդ՝ համապատասխանաբար պակասեցնելով

4.06բաժնի 3 խմբի 1դասի 5113 հոդվածը պակասեցնել 580.0 հազար դրամով

5.08բաժնի 2 խմբի 3դասի 5113 հոդվածը պակասեցնել 949.2 հազար դրամով

6.04բաժնի 5 խմբի 1դասի 4251 հոդվածը պակասեցնել 490.0հազար դրամով

7.01բաժնի 6 խմբի 1դասի 5122 հոդվածը ավելացնել 821,0 հազար դրամով

8.01բաժնի 1 խմբի 1դասի 5122 հոդվածը ավելացնել 128,2 հազար դրամով

9.10բաժնի 7 խմբի 1դասի 4729 հոդվածը ավելացնել 470.0հազար դրամով

10.Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը պակասեցնել 580,0հազար դրամով

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

1. Աղախանյան Կարեն ----------
2. Քեսաբլյան Հակոբ ----------
3 Քեսաբլյան Ալեքսանդր ----------
4. Սմբատյան Սանասար ----------
5.Քարամյան Ավետիք ----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԵՓՐԻԿՅԱՆ

2011 թվականի դեկտեմբերի 5
գ. Այգեվան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՈՐՈՇՈՒՄ

5 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2011թ.

4. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԽԱՉԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԶԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և հաշվի առնելով Խաչիկ Ղազարյանի դիմումը Այգեվան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1.Այգեվան համայնքի բնակիչ Խաչիկ Աղվանի Ղազարյանին տալ արտոնություն գույքահարկի 140000 (մեկ հարյուր քառասուն հազար) դրամ:Լ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

ԿՈՂՄ

1. Աղախանյան Կարեն ----------
2. Քեսաբլյան Հակոբ ----------
3 Քեսաբլյան Ալեքսանդր ----------
4. Սմբատյան Սանասար ----------
5.Քարամյան Ավետիք ----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

?2011 թվականի դեկտեմբերի 5
գ. Այգեվան